**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5**

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/5» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան «15-ը» մարտի 2018թ.

ժամը 09[10]

*Քանի որ Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու* ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի խորհրդական Կ. Հակոբյանը բացակայում էր, հանձնաժողովի նիստը նախագահեց ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Մ. Խալաթյանը:

**գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Մ. Խալաթյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բադալյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/5» ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

1. Մասնակցի(ների)՝ բաց մրցույթի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր(իրենց) համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**1. Մասնակցի(ների)՝ բաց մրցույթի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր(իրենց) համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/5» ծածկագրով բաց մրցույթի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին «Սասունասար» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ հետևյալ դեպքի.

- ընթացակարգի հրավերի թիվ 5.1 հավելվածով նշված ՁԻԼ ավտոմեքենան ըստ ներկայացված տեխնիկական անձնագրի պատկանում է Արմեն Զաքարյանին, սակայն բացակայում է վերջինիս հետ կնքված վարձակալության պայմանագիրը,
- ընթացակարգի հրավերի թիվ 5.1 հավելվածում բացակայում է Նորայր Զաքարյանի հետ կնքված վարձակալության պայմանագրի հիման վրա վարձակալած տեխնիկայի մասին տեղեկատվությունը, իսկ Նորայր Զաքարյանին պատկանող տեխնիկայի տեխնիկական անձնագիրն անընթեռնելի է,
- «Սանլորետ» ՍՊԸ-ի հետ կնքված էքսկավատորի վարձակալության պայմանագիրը թվագրված է 11.02.2017թ., սակայն որպես գործողության վերջնաժամկետ նշված է 01.06.2010թ.:
- Ներկայացված նմանատպ աշխատանքների կատարման պայմանագրի գինը չի համապատասխանում տվյալ պայմանագրի շրջանակներում կազմված հանձնման-ընդունման արձանագրություններով և հաշիվ ապրանքագրերով սահմանված ընդհանուր թվին:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը, իսկ նիստը շարունակել այդ համապատասխանությունը շտկելուց հետո:

***ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:***

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

2.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/5» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել մասնակցի(ների) կողմից ներկայացվելիք շտկումների քննարկման վերջնաժամկետի օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող Մ. Խալաթյան

Գնահատող Հ. Բաղալյան

Գնահատող Ա. Մաղաքյան

Գնումները համակարգող՝ Ռ. Մարդոյան

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6**

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/5» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

22-ը մարտի 2018թ.

ժամը $10^{00}$

Ընդունել ի գիտություն, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի ՊԺԿ-ի 20.03.2018թ. N 154/ԴՎԱ հրամանով հանձնաժողովի կազմում տեղի է ունեցել փոփոխություն և ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Մ. Խալաթյանի փոխարեն որպես հանձնաժողովի գնահատող անդամ է սահմանվել ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԶԲՖԿ ծառայության պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյանը:

**Քանի որ Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու** ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի խորհրդական Կ. Հակոբյանը բացակայում էր, հանձնաժողովի նիստը նախագահեց ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԶԲՖԿ ծառայության պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյանը:

**գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԶԲՖԿ ծառայության պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բաղալյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

Հաշվի առնելով գնահատող հանձնաժողովի նոր անդամի կողմից մասնակցի որակավորման փաստաթղթերը ուսումնասիրելու անհրաժեշտությունը՝ սույն նիստը հրավիրվեց 22.03.2018թ.:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/5» ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

1. «Սասունասար» ՍՊԸ-ի կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթի քննարկման և ընտրված մասնակցին որոշման մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**1. «Սասունասար» ՍՊԸ-ի կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթի քննարկման և ընտրված մասնակցին որոշման մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

1.1 Քննարկելով «Սասունասար» ՍՊԸ-ի կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթերը՝ հանձնաժողովը դրանք գնահատեց հրավերի պահանջներին համապատասխան:

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Սասունասար» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/5» ծածկագրով բաց մրցույթի հրավերի պահանջներին, վերջինիս հայտարարել ընտրված(հաղթող) մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/5» ծածկագրով մրցույթի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/5» ծածկագրով բաց մրցույթի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող Ա. Պապյան

Գնահատող Ա. Մաղաքյան

Գնահատող Հ. Բադալյան

Գնումները համակարգող՝ Ռ. Մարդոյան